թեամբ և նոյն կարգով նոյն տէր Յովհաննէսի հրոկողութեան տակ կաշու մէջ կարեցին և սայլերի վերայ բարձած Ասպահան հասուցին Ս. Էջմիածնի տաճարից հանած տասն և հինգ քար, որոնք նոյն պատուով ընդունուեցան և իբրև սրբութիւններ դրրուեցան Նոր Ջուղայի Խօջենց անունով եկեղեցու մէջ։

Քարերն և Ս. Աջը տանելու խորհուրդն այն էր, որ Նոր Ջուղայում Նոր Էջմիածին շինուի, և այդ իսկապէս այն պատճառով, որ Նոր Ջուղայի Հայերն աւելի իրենց հայրենական վանքերի, ուխտատեղիների, մանաւանդ Ս. Էջմիածնի, կարօտն էին քաշում։ Նոքա մտաբերում էին շարունակ, որ Էջմիածնումն է Ս. Լուսաւորչի Աջը, որով օրհնուում է Ս. Միւռոնն և տարածւում ամբողջ աղգի մէջ։ Շահաբաս դաղթականների խօսքերից հասկացաւ, որ Ս. Աջի և Ս. Միւռոնի պատճառով բոլոր Հայոց աղգն հնազանդում է Ս. Էջմիածնի Աթոռին և նորա կաթուղիկոսին, ուստի նա կամենում էր Ս. Էջմիածինը փոխադրել Նորջուղայ, որպէսզի այնտեղ կաթուղիկոս նստի, միւռոն օրհնէ և Հայոց աղգը հաստատուի մնայ այնտեղ, «որովհետև Աջի և Էջմիածնի վերայ է կապուած բոլոր Հայոց աղգը։»* Այս հեռատես խորհրդին յարմարուե-

---

* Առ. Դաւ. ԺԸ.